



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

№

749-4/2

15» հունիսի 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2020-2021  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ,  
ԱՇԿԱՌՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 700-Ն և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 1295-Ն որոշումները՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) 2020-2021 ուսումնական տարվա համար օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների փաստաթղթերի ընդունման, հաշվառման և փորձաքննության անցկացման կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) արտաքին կապերի և սիյուռքի վարչությանը (պետ՝ Արկադի Պապոյան)՝
- 1) Սույն հրամանի 1-ին կետով սահմանված ժամանակահատվածներում ապահովել օտարերկրացիների և սիյուռքահայերի փաստաթղթերի ընդունման, փորձաքննության և հաշվառման գործընթացների կազմակերպումը.
- 2) Կազմակերպել օտարերկրացիների և սիյուռքահայերի փաստաթղթերի բաշխումը ՀՀ ուսումնական հաստատություններ՝ համաձայն ներկայացված դիմումների:
4. ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավարներին՝ օտարերկրացիներին սիյուռքահայերի փաստաթղթերի ընդունումն իրականացնել բացառապես ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 700-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության» կարգի և ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի թիվ 1295-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության» կարգի համաձայն:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարում եմ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանին:

Նախարար

Ա. Հարությունյան

6/15/2020

